

պէս Գրիգոր Շղթայակիր պատրիարքին ձեռքով պատրաստուածը: Նոյն ցաւալի դէպքերուն առանց մանրամասնութիւնները յիշելու, միայն գաղափար մը տալու համար, մէջ կը բերենք ԺԲ. դարուն Անկլո-Սաքսոն վաճառականի մը՝ Saewulfի Ուղեգրութենէն հակիրճ հատուած մը՝ որ կը նկարագրէ ուխտաւորներու Նաֆայի առջև պատահած սոսկալի մէկ այեկոծութիւնը և նոյն քաղաքէն Նրուսաղէմ՝ Երթեկոզ ուխտաւորներուն կրած տաւապանքները: . . . Saewulf Պրէնտիգիէն 13 շաբաթի մէջ կը հասնի Նաֆա. այն գիշերը՝ որ ցամաք ելնել կը պատրաստուէր, Նաֆայի առջև սոսկալի այեկոծութեան մը կը բռնուի. աննկարագրելի էր փոթորիկին սաստկութիւնը. ալիքները լեռան պէս կը բարձրանան և կը տարածուին ամէն կողմ, 30 նաւերէն 27 նաւերը սաստիկ հովէն իրար զարնուելով կը փշրուին և կը խորտակուին. 1000 է աւելի անձեր ծովամոյն կ'ըլլան, և միւս օրը ալիքները ծովամոյն արանց և կանանց դիակները ցամաք կը նետեն. Saewulf շատ դժուարութեամբ մահուանէ կ'ազատի և երբ ցամաք կ'ելնէ գոհութիւն կը մատուցանէ Աստուծոյ: Ան հետևեալ օրը ուխտաւորական խումբի մը հետ միացած Նաֆայէն ճամբայ կ'ելլէ դէպի Նրուսաղէմ, վտանգաւոր և ժայռոտ լեռներէ կ'անցի. Ասկաղոն տակաւին եգիպտացոց ձեռքն էր. Խաչակիրք թէև կ'իշխէին Նրուսաղէմի և շրջակայից, բայց լատին իշխանութիւնները չէին կրցած ուխտաւորաց ճանապարհները ապահովել և փրկել զանոնք կողոպուտէ և սպանութիւններէ. լեռնոտ ճանապարհներուն եգերքները աւազակները գիշեր ցերեկ դարանակալ կ'սպասէին պահուրտելով քարայրներու մէջ. այնպէս որ յայտնի չէր ըլլար անոնց ներկայութիւնը. կողոպտածնին կ'սպաննէին. այնպէս որ ճամբու եգերքներուն վրայ դիակները ցիրուցան անթաղ կը մնային. կային որ ծարաւէ եւ անօթութենէ կը մահանային. Saewulf հազիւ կ'ազատի այս վտանգաւոր ճանապարհէն և ողջամբ կը հասնի Նրուսաղէմ: Saewulfի վերաբերեալ այս խօսքերը ճշմարիտ պատկերն են ուխտաւորներուն պարբերաբար պատահած ծովու և ցամաքի վտանգներուն. և այս վիճակը տեւած է ԺԲ. դարէն շատ աւելի կանուխ ժամանակներէ սկսեալ մինչև ԺԹ. դարու վերջերը, երբ կ'ապահովուին ցամաքի ճանապարհները Նաֆայէն-Նրուսաղէմ երկաթուղային գիծերու շինութեամբ (1892). ծովահններու ար-